ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊՎԾ-ԳՀԾՁԲ-21/01

ք.Երևան «15» Մարտ 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Անի Բաղդասարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիտ Էսվե» ՍՊԸն, ի դեմս տնօրեն Սուրեն Մկրտչյանիի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1866 000(մեկ միլիոն ութ հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

4"3 ՀՀ պետական վերահսկողական ծառայությանն ամրագրված ծառայողական ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայություններ Պայմանագիրը կնքվում է բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների չափով, իսկ վճարումը կատարվում է փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ համապատասխան վճարման ժամանակացույցի:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[23]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության պետական
վերակսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

---------- Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Էլիտ էսվե» ՍՊԸ
ք. Երևան, Ա. Ահարոնյան 22փ., բն-30
« Ամերիաբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 00465342

Տնօրեն՝

---------- Ս. Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« 15 » Դեկտեմբեր 2021թ. կնքված
ՊԿԾ-ԳՀՇՁԲ-21/01
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Փ	ԳՄԱ կոդը	Գնման առարկան	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը **
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	TOYOTA CAMRY 2.5 2012թ. ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում և վերանորոգում: Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է HYUNDAI ELANTRA 2015թ. ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում և վերանորոգում: Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է HYUNDAI ELANTRA 2011թ. ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում և վերանորոգում: Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է TOYOTA CAMRY 2.4 2008թ. ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում և վերանորոգում: Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է TOYOTA COROLLA 1.4 2008թ. ավտոմեքենայի տեխնիկական	դրամ	1866 000	1	ք. Երևան, Մաշտոցի 47	Պայմանագիրը կնքելու պահից մինչև 25"12"2021

		սպասարկում և վերանորոգում: Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է					
		CHEVROLET CRUZE 1.8 2011թ. ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում և վերանորոգում: Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է					
		HYUNDAI SONATA 2.0 2010թ. ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում և վերանորոգում: Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության պետական
վերակսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

---------- Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էլիտ էսվե» ՍՊԸ
ք. Երևան, Ա. Ահարոնյան 22փ., բն-30
« Ամերիաբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 00465342

Տնօրեն՝

---------- Ս. Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
« 15 » Նոյեմբեր 2021թ. կնքված
ՊՎԾ-ԳՀԾԶԲ-21/01
ծածկագրով պայմանագրի

h/h		TOYOTA CAMRY 2.5 2012թ.	HYUNDAI ELANTRA 2015թ.	HYUNDAI ELANTRA 2011թ.	TOYOTA CAMRY 2.4 2008թ.	TOYOTA COROLLA 1.4 2008թ.	CHEVROLET CRUZE 1.8 2011թ.	HYUNDAI SONATA 2.0 2010թ.
1	2	3	4	5	6	7	8	9
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը							
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0	0
2	Սառեցման համակարգի ստուգում	. 0	0	0	0	0	. 0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0	0
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0	0
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0	0
8	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0	0
9	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0	0
10	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0	0
11	ABS համակարգի ստուգում	0	0	0	0	0	0	0
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0	0
14	Թափքի վիճակի ստուգում	0	0	0	0	0	0	0

15	Տարբեր ագրեգատների, յուղերի և քսուկների որակի և մակարդակների ստուգում	0	0	0	0	0	0	0
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը							
16	Շարժիչի հանում տեղադրում	38,000	40,000	40,000	38,000	38,000	38,000	40,000
17	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0	0	0	0	0	0	0
18	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0
19	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0	0	0	0	0
20	Շարժիչի վերանորոգում	105,000	110,000	110,000	105,000	105,000	105,000	110,000
21	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
22	Նույնը V6-ի դեպքում	0	0	0			0	0
23	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	5,000	6,000	6,000	5,000	5,000	5,000	6,000
24	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5,000	6,000	6,000	5,000	5,000	5,000	6,000
25	Նույնը աջի համար (V6)	0	0	0	0	0	0	0
26	Նույնը ձախի համար (V6)	0	0	0	0	0	0	0
27	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	28,000	30,000	30,000	28,000	28,000	28,000	30,000
28	Նույնը աջի համար (V6)	0	0	0	0	0	0	0
29	Նույնը ձախի համար (V6)	0	0	0	0	0	0	0
30	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	20,000	20,000	20,000
31	Շարժիչի գլխիկի վերանորոգում	28,000	30,000	30,000	28,000	28,000	28,000	30,000
32	Փականի խցուկի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
33	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0
34	Գազաբաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
35	Նույնը V6-ի ձախի դեպքում	0	0	0	0	0	0	0
36	Նույնը V6-ի աջի դեպքում	0	0	0	0	0	0	0
37	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
38	Գազաաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	8,000	8 000	8 000	8,000	8,000	8,000	8 000

39	Հրիչների փոխարինում SOHC	0	0	0	0	0	0	0
40	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
41	Ատամնավոր փոկի կամ շղթայի փոխարինում	0	0	0	0	0	0	0
42	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
43	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0
44	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	11,000	12,000	12,000	11,000	11,000	11,000	12,000
45	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0
46	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0
48	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0
50	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	38,000	40,000	40,000	38,000	38,000	38,000	40,000
51	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0	0	0	0	0
52	Մխոցային օղակների փոխարինում	28,000	30,000	30,000	28,000	28,000	28,000	30,000
53	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
54	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0
55	Թափանիվի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ							
56	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000
57	Յուղի պոմպի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	20,000	20,000	20,000
58	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
59	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0
60	Ղեկավարման բլոկի վերանորոգում	57,000	60,000	60,000	57,000	57,000	57,000	60,000
61	Բռնկման կարգավորում	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000
62	CO կարգավորում	0	0	0	0	0	0	0
63	Օդի զտիչի փոխարինում	0	0	0	0	0	0	0

64	Սրահի զտիչի փոխարինում	0	0	0	0	0	0	0
65	Ինժեկտորի բոցամուղների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5 000
66	Ինժեկտորի բոցամուղների մաքրում	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000	10 000
67	Վառելիքի պոմպի փոխարինում	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000	10 000
68	Վառելիքի զտիչի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5 000
69	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000	10 000
	3. Սառեցման և արտածման համակարգ							
70	Հովհարի փոկի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
71	Հովհարի հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3 000
72	Ռադիատորի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5 000
73	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0
74	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0	0	0	0	0
75	Ռադիատորի վերանորոգում	40,000	40,000	40,000	40,000	40,000	40,000	40,000
76	Թերմոստատի փոխարինում	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000
77	Ջրի պոմպի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	20,000	20,000	20,000
78	Նույնը DOHC և V-6 դեպքում	0	0	0	0	0	0	0
79	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0
80	Ջրի պոմպի վերանորոգում	0	0	0	0	0	0	0
81	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
82	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0
83	Ընդարձակող բաքի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
84	Խլարարի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
85	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0
86	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000
87	Սրահի զտիչի փոխարինում	0	0	0	0	0	0	0
	4. Կցորդում, ՓՏ							

88	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
89	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	0	0	0	0	0	0	0
90	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0	0	0
91	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
92	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	0	0	0	0	0	0	0
93	ՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	115,000	120,000	120,000	115,000	115,000	115,000	120,000
94	ՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	130,000	140,000	140,000	130,000	130,000	130,000	140,000
95	Նույնը V6-ի համար	0	0	0	0	0	0	0
96	ՓՏ-ի հանում և տեղադրում	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000
97	Նույնը V6-ի համար	0	0	0	0	0	0	0
98	ԱՓՏ-ի վերանորոգում	220,000	230,000	230,000	220,000	220,000	220,000	230,000
99	Նույնը V6-ի համար	0	0	0	0	0	0	0
100	ՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	8,000	8,000	8,000
	5. Առջևի և հետևի կամրջակներ							
101	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
102	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	0	0	0	0	0	0	0
103	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	0	0	0	0	0	0	0
104	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
105	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0	0	0
	6. Կախոց							
106	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0	0	0	0	0	0	0
107	Տրավերսի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000
108	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000

109	Անվակունդի առանցքակալի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
110	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0	0	0	0	0	0	0
111	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
112	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
113	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	0	0	0	0	0	0	0
114	Մեղմիչի թասակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
115	Զսպանակի հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
116	Առջևի Մեղմիչի հանում և տեղադրում	6,000	6,000	6,000	6,000	6,000	6,000	6,000
117	Ներքևի լծակի հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	4,000	4,000	4,000
118	Ներքևի լծակի վռանների փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
119	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	4,000	4,000	4,000
120	Միջին ձգանի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
121	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
122	Վերևի լծակի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
123	Վերևի լծակի վռանների փոխարինում	0	0	0	0	0	0	0
124	Գնդե հոդակապերի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
125	Ծայրականների հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
126	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
127	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
128	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0	0	0	0	0	0	0
129	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
130	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000

131	Հետևի զսպանակի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
132	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
133	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	4,000	4,000	4,000
134	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
135	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
136	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
137	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
138	Անվաբացքի կարգավորում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
139	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	500	500	500	500	500	500	500
	7.Ղեկային մեխանիզմ							
140	Ղեկային կալունի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000
141	Նույնը V6-ի համար	0	0	0	0	0	0	0
142	Ղեկային կալունի վերանորոգում	115,000	120,000	120,000	115,000	115,000	115,000	120,000
143	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	0	0	0	0	0	0	0
144	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0
